Յիշեալ լայնանիստ լեռան գագաթը մի կողմից նայում է դէպի Վանայ ծովը, միւս կողմից՝ դէպի Ռշտունեաց աշխարհը: Այդ գագաթի վրայ բարձրացաւ ս. Յակոբ Մծբնայ հայրապետը, այն աղէտաւոր անցքից յետոյ, երբ խստասիրտ Մանաճիհրը նրա սարկաւագներին ածեց ծովի մէջ: Վշտացած հայրապետը լեռան բարձրութիւնից նայեց նախ դէպի ծովը, որ կլանել էր նրա սարկաւագներին, եւ ապա դէպի Ռշտունեաց աշխարհը, որ այնքան անգութ գտնոեցաւ դէպի նրա սանիկները: Նա անիծեց թէ ծովը եւ թէ աշխարհը... Ծովը կատաղեց, գոռաց, փրփրեց եւ իր ափերից իսկոյն դուրս վազեց: Շէն ու շինութիւն, արտ ու անդաստան, բոլորը կորան, ջրասոյզ եղան: Երկինքը պղնձացաւ, անձրեւ չտոեց, երկիրը ամլացաւ էլ ջուր չբխեց: Ծառն ու ծաղիկը, խոտն ու բուտը, ճախն ու ճարակը, անխոնջ մշակի վարն ու վաստակը, բոլորը երաշտից այրոեց, ցամաքեց: Նրանից յետոյ սովը մէջ մտաւ եւ իր ետեւից ժանտախտը բերաւ: Անգութ հնձաւորը հնձեց, տապալեց եւ դիակներով երկիրը ծածկեց: Գայլն ու բորենին, անգղն ու արծոին ազատ, աներկիւղ, թափառում էին մի գիւղից միւս գիւղ եւ լափում էին անթաղ դիակներ...

Արտամեդի անպատկառ աղջիկներին անիծելուց յետոյ ս. Յակոբ հայրապետը՝ այդ երկրորդ սարսափելի անէծքն էր, որ կատարեց Ռշտունեաց աշխարհում: Յետոյ նա անիծեց Փշաւանս գիւղը, ուր մինչեւ այսօր փուշից աւելի ոչինչ չէ բուսնում... Բայց ժողովուրդը, ներողամիտ ժողովուրդը, այդ անիծասէր հայրապետի յիշատակը յաւէրժացնելու համար նոյն Կապուտ-կող լեռան կապտագոյն կողքի վրայ, նրա անունով հիմնեց մի վանք, որ մինչեւ այսօր պաշտւում է ամենայն ջերմեռանդութեամբ: Մենք անցանք այդ վանքի մօտից, բայց նրա մէջը չմտանք:

Ակսեալ Նոր-գիւղ կոչոած աւանից, որը այժմեան Գաւաշ գաւառակի գայմագամանիստ գիւղաքաղաքն է, մինչեւ Դատոանի նաւահանգիստը հասնելը, ծովի եզերքով սփռոած են զանազան ամայի եւ շէն վանքեր, որոնք իրանց ծովահայեաց դիրքով սքանչելի տեսարաններ են ներկայացնում: Ամենագեղեցիկ տեղերը լեռների բարձրաւանդակների վրայ՝ ընտրել են վանքերի համար: Ես կը յիշեմ այդ վանքերի անունները միայն. Կարմրուկ սուրբ Աստոածածին, Գագիկ թագաւորից շինոած, որը միաժամանակ երեք հարիւր միաբան ունէր, իսկ այժմ համարեա ամայի է. Լուսապտուղ սուրբ Սահակ, Գանձակ գիւղի մօտ, որը ամէն աչացաւ ունեցողների բժշկողն է. Ս. Թոմայի վանք, որը գտնւում է Կապուտ-կող լեռան ծովահայեաց բարձրութեան վրայ եւ պահում է իր մէջ Թովմայ առաքեալի ահեակ բազուկը. Ս. Գեւորգայ վանք, Գոմս գիւղի մօտ, որի մէջ պահւում է ս. Գեւորգայ գլուխը, Ս.